

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻՍ ՔՈ ՀԱՅԵԼԻՆ:

Խաղաղութիւն եմ թողնում ձեզ, իմ խաղաղութիւնս եմ տալիս ձեզ: Ոչ թէ ինչպէս աշխարհքս է տալիս, տալիս եմ ես ձեզ: Ձեր սրտերը չխռովին ու չվախենան:

Աշխարհիս մէջ նեղութիւն կունենաք, բայց սիրտ աւելք, ես յաղթեցի աշխարհին:

Ա.-է. 3. 27. և Ժ. 33:

Ո՛րտեղ որ գնումեմ, ամեն տեղ էլ գանգաւաններ եմ լսում: Մէկն իւր ամուսնութիւնից գոհ չէ, միւսը՝ ծանր պարտքերի տակից գործ գալ չէ կարողանում ու ախ է քաշում, երրորդը՝ դատաստանի է ընկել, շատ հոգս է անում ու գլուխ դուրս չէ բերում, չորրորդը՝ վատ գաւակներ ունի: Եթէ կարողանայինք տնէ տուն, գեղէ գեղ, քաղաքէ քաղաք ման գալ, կը գտնէինք արգիօք մի ընտանիք, մի տուն, որոյ մէջ բնակուած տնայինք անողորմ ու բախտութիւն ու կատարեալ բաղդաւորութիւն: Կարելի է՝ քանի հազար մարդոց մօտ կերթայինք ու հազիւ գտնէինք մի մարդ, որ իւր սրտի մէջիցը ասէր թէ՝ « մենք կատարելապէս գոհ ենք մեր կեանքից »:

Եթէ որ աշխարհիս մէջն այսչափ քիչ է ուրախութիւնն և այնչափ շատ են յայտնի ու ծածուկ ցաւերը, նեղութիւններն ու թշուառութիւններն, էլ ինչո՞ւ համար քեզ Աստուծոյ բարութեանն ու իմաստութեանը փառք տալիս: Մի՞թէ բարութիւն է, որ մենք՝ տանջանքներով, նեղութիւններով ու անբախտութիւններով լիքը մի կեանք ունինք, որոյ մէջը, կարելի է, հազիւ մի օր բոլորովին անհոգս, գոհ և ուրախ անց կացանք: Մի՞թէ իմաստութիւն է, որ մենք՝ տկար մարդիկս աւելի չարիքներով պաշտօնաւորուած պիտի լինինք, քան թէ բարիք ու բարօրութիւն տեսնենք:

Երբ որ ես մարդոց արած գանգաւանները քննում եմ, զարմացնում է ինձ այն, որ նոցանից շատ շատերն անբաղ չեն՝ ոչ թէ

իրանց հանգամանքներին, որոնց մէջ իրօք գտնուեան, այլ աւելի նորանից, որ իրանց անմիտ ու անտեղի ցանկաւթիւններին հասնել չեն կարողանում: Մի գործի տէր մարդ գանգաւ է անում իւր ձեռքի արհեստից, առումէ թէ՛ աշխատանք չկայ մէջն, թէ էլ այն օգուտը չէ բերում իրան, ինչ որ առաջն ունէր, և առումէ թէ՛ շատ ցանկալի կլինէր իրան, որ կարողանար իւր հարեանի գործին կոչիլ որոյ մէջը բարեկեցութեան մի սկիւ աղբիւր է տեսնում: Բայց երբ որ գնումեա նորա առած հարեանին, նա էլ անիծումէ այն օրն, որ այդ իւր ձեռքն ունեցած գործին կապւ, երգվումէ, որ իւր ոչ մի դաւակին չի թողնիլ, որ իւր գործովը պարտալի, որովհետեւ ձեռքը շատացել է: Եթէ մանուկեա մի պատուաւոր վաճառականի մեծ խանութը, ժաստիկ գանգաւումէ նա էլ առաւելորի շատ տալիաւելուցն, տալիս թէ՛ ժամանակը վատացել է, մինչդեռ կարելի է, մի ուրիշ մարդ հէնց նոյն հանգամանաց մէջ լաւ տուտուր է անում, լաւ փողեր դատում, քայց իւր անխոհեմութիւնից՝ մեծ ու անհաշիւ բան բռնելով՝ և իւր ոտն իւր վերմտիկ չափովը չձգելով, վերջապէս սնանկութեան անդունդի բեխան է հասնում: Կամ թէ՛ տեսնումես, որ երկու մարդ մի և նոյն պաշտօնի ետեւիցն են ընկնում: Մէկը չի ստանում՝ և թիայն տրտնջելով ու դժգոհելով է տանում իւր յարմարաւոր չտեսնուիլն ու չընդունուիլն այդ պաշտօնին, մինչդեռ միւրը՝ մի քիչ ժամանակ որ մնումէ այդ իւր նոր տեղումն, իւր այդ պաշտօնի ծանրութիւններիցը գրեթէ խեղդուած, իրան հետ միասին երբեմն նոյն պաշտօնի ետեւից ընկնողին է նախանձում, որ իւր մասնաւոր վիճակովն բաղդաւոր է ու երանի է տալիս նորան: — Ուրեմն այս ամեն դիպուածներումն, իսկն որ մտիկ տանք, ըստ ինքեան վիճակը չէ, որից մենք գոհ և ուրախ չենք, այլ մեր միտքն ու սիրտն, որով մենք մեր վիճակը տանումենք: Երբեմն չափից դուրս փողի ետեւից ընկնելն է, երբեմն չափից դուրս պատուոյ ետեւից ընկնելն, որ դառնացնումէ մեր վիճակը, որից գոհ կը լինէինք, եթէ չափաւորութիւնը սիրէինք, քիչով բաւականանալը գիտենայինք, այն ժամանակ մեր վիճակը մեզ համար լաւ վիճակ պէտք է համարէինք և ուրախ պիտի լինէինք:

Ամեն մի մարդ աշխարհիս վերայ մտիկ է տալիս իւր տեսակէտից: Ինչ որ մէկին անտանելի չարիք՝ կամ շատ վատ բան է երեւում, մի ուրիշի համար կարող է ցանկալի բարիք լինել. ինչ բա-

նի վերայ որ մէկը լող է լինում, միւսը սաստիկ սարսափումէ։ Ուրեմն պէտք է ստենք, որ ընդհանրապէս չկայ ոչ մի չարիք, կամ վատ բան, այլ ինքնեքս ենք այդպէս համարում և մեզ համար չարիք ու վատ վիճակ շինում։ Յոյց տոնք ինձ մէկ վիճակ, որ ամեն մարդիկ՝ երիտասարդ՝ թէ ծեր, հարուստ՝ թէ աղքատ, ոգէտ՝ թէ գիտուն և իմաստուն մարդ՝ միաբերան ասեն՝ թէ ամենամեծ չարիքը՝ կամ ամենավատ բանն հէնց այդ է։—Մինչև անգամ մահն ամեն մարդու համար չարիք՝ կամ շատ վատ բան չէ, ինչու որ շատերը յօժար են և աւելի լաւ են համարում մեռնելն, որ իրանց ամօթ՝ կամ անպատուութիւն բերող մի բանից ազատուե՛ն։ Մինչև անգամ կան մարդիկ, որոնց համար ամօթ ու անպատուութիւնը շատ վատ բան չէ երևում, ինչու որ տանում են, միայն թէ աղքատութիւն չը քաշե՛ն։ Մինչև անգամ աղքատութիւնն էլ մի չարիք, մի շատ վատ բան չէ, որովհետև հազարաւոր մարդիկ աղքատութեան մէջ են ապրում ու միշտ ուրախ են և առողջ։ Առողջութիւն կորցնելն էլ մի մեծ չարիք չէ, քանի որ այնպիսի հիւանդներ ենք տեսնում, որ տարիներով պառկած են, տեղից վերկենալ չեն կարողանում, բայց էլի իրանց ուշքերն տխրութեամբ չեն քցում դէպի երկինքն։

Եթէ որ բոլոր աշխարհս էլ մօն գաս, հարցնես թէ՛ որն է ուրեմն ամենամեծ անբաղգութիւնն, որ ամեն մարդ էլ վկայում է թէ՛ մեծ անբաղգութիւն յիրաւի այդ է, այնչափ՝ տեսակ տեսակ պատասխաններ կը ստանաս, ինչպէս որ հարցրած լինէիր թէ՛ ամեն մի մարդ ի նչն է համարում իւր համար ամենամեծ բաղդաւորութիւն։

Սորանից մենք պէտք է հեաւեցնենք մտաւոր թծամբ թէ՛ մեր քաջին ու վեհակներն, որ Աստուած ամեն մի մարդու որպէս և մեզ պարգևում է, ըստ ինքեան ամենն էլ հասարակեալ լաւ են, բայց մարդիկն իրար հասարակ չեն, տարբեր են, որոնց Աստուած այս՝ կամ այն վիճակը պարգևում է։ Ինչ որ Աստուած անում է, բոլորն էլ բարի է, մարդս է միայն, որ բարեքի հետ չարիք է կպցնում, խառնում։ Ոչ թէ զրսիցն է գալիս մեզ վերայ չարիքն, այլ մեր ներսից է դուրս գալիս արտաքին աշխարհի վերայ կեանքի թշուառութիւնը։ Աշխարհքս իւր օրէնքներովն ու կարգերով՝ միշտ նոյնն է մնում, բայց մահկանացու մարդս տարբեր կերպով է դատում աշխարհիս վերայ ու իւր տանջանքն հէնց զորանով նորա

մէջը բերում, մոցնում:

Ուրեմն, այ մահկանացու մարդ, քո կեանքիդ վերայ արած գանգաւանքիդդ ես հասկանումեմ՝ ոչ թէ մարդուս կեանքն ինչ է, այլ թէ դու ինքդ ով ես, կամ ինչ ես: Աշխարհս ք հայելն է, ինչպէս որ քեզ նորա մէջ մտիկ կը տաս ու կը տեսնես, ինքդ էլ այնպէս ես:

Աշխարհս ք հայելն է: Երեխան խաղումէ, զուարճւումէ, չի մանալով թէ՛ հոգսը, տխրութիւնն ինչ է, նորա համար էգոնք չկան ամենեւին: Զմեռուայ ձիւնը նորան նոյնչափ զուարճութիւն է պատճառում, որքան որ գարնան ծաղիկներն են նորան ուրախութիւն բերում իրանց գեղեցկութիւնովն. իւր պարզմտութիւնովն վրայ է պրծնում նա ինչպէս իրան գիւրբեկան, նոյնպէս և ոչ ախորժելի բանին վերայ: Նա իւր անմեղութեամբն ու անգիտութեամբն այնպէս է վարվում կեանքի հետ և այնպէս է մտիկ տալիս նորա վերայ, ինչպէս որ իմաստունն ու քրիստոնեան պէտք է մտիկ տար, վարուէր ու անէր իւր կեանքովն ու գործովն՝ հաստատ և անվտանգ սկզբունքով և հիմնական օրէնքներով ու պատուիրաններով: Երկուսն էլ՝ ինչպէս իմաստունն նոյնպէս և երեխան՝ սրտով կպած չեն լինում՝ ոչ մի անցաւոր բանի, երեխան, որովհետեւ դեռ ևս քիչ ցանկութիւններ ունի, իսկ իմաստունն՝ որովհետեւ չէ ուզում, որ իւր ցանկութիւններն իւր վերայ իշխեն: Սորա համար ասաց Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս խաբին մտքով թէ՛ եթէ այս երեխայիս պէս չլինէք, երկնքի արքայութիւնը մտնել չէք կարող:

Իհնչեք ք հայելն է: — Մի երեխայ լաց է լինում, որովհետեւ վայր ընկնելով, մի տեղը ցաւացրել է. թող քարի կոշտութեան վերայ գանգատ չանի, այլ հէնց իւր անզգուշութեան վերայ: Միւսն, որ փոքր երեխայ չէ, տխրումէ, որ կորուստներ ունեցաւ, իւր ունեցած յայտերը դատարկ դուրս եկան ու խաբուեցաւ: Ի՞նչ է այստեղ ամենադառը բանը: Յիրաւի այն չէ, որ մենք աստուածային անքննելի խորհրդովն ու անօրէնութեամբ պիտի կառավարուէինք, չունենալով, ինչ որ ունէինք, կամ պէտք է ունենալինք, այլ այն, որ մենք աւամայ և զժգոհութեամբ պիտի յարմարուէնք և ընդունենք այն, ինչ որ հարկաւ անհրաժեշտ է, ինչ որ մեր կամքով փոխել, ուրիշ կերպ անել չենք կարող մեր շնորհութեանը համեմատ՝ այն մեր զգացմունքն է, որ մենք մեր սո-

վրուժիւնների ու ցանկութիւնների մէջ վերք ստացանք, վիրաւորուեցանք, վնաս, զրկանք ունեցանք, այնպէս ենք զգում մեզ դժգոհ սրտով, երբ որ մեր անձնասիրութիւնը մի կտրուկ ազդարարութիւն ու յորգոր է ստացել: Աշխարհի անկատարութիւնը չէ ամենեւին այլ մեր իսկ անկատարութիւնն, որ մենք գանգատներ ենք անում շատերի առաջ: Դու ինքդ աւելի լաւ եղիր, որ կողմն էլ որ դառնաս, քո ամեն բանդ էլ լաւ կլինի:

Հախօսում էլ են նոյնպէս այն անբախտաբեան վերայ, որոյ մէջ մենք մեզանք չենք, մեզանից չէ՛, ու մեր գլխին գալիս է: Եւ յիրաւի կան այնպիսի բաներ, որ մեզ պատահում են ու մեր սրտին շատ ցուտ տալիս, ու մենք մեզ յանդիմանելու, նախատելու բան չունինք, որ մեր խելքիցն այդ բաներին հանդիպեցանք, պատճառը մենք ինքներս եղանք: Ի՞նչ մեղաւոր է մի պարզ ու անմեղ արարած, ի՞նչ կը գար ձեռքիցը մի արդար երեխայի, երբ որ վրան հիւանդութիւն է եկել ու անկողինքին մէջ պառկած, հանգստութիւն չէ գտնում, գանգատ է անում, լաց լինում, ունքում: Ի՞նչ ձեռքիցը կը գայ այն երեխայի, որոյ անառողջ ծնողքը մի տկար, հիւանդոտ մարմին, կամ թունաւորուած ծուծեր իրանցից ժառանգելու պատճառ են եղել: Ի՞նչ կը գայ ձեռքիցն մի արդար մարդու, որ սաստիկ անարգանք ու զրկանք է կրում ու բանտում սեօրեր անց կացնում, երբ որ չարահոգի, անզգամ ու ամբարիշտ մարդիկ իւր վերայ սուտ գանգատներ են շինել, արել, զրպարտել և կաշառակեր գատաւորներով իրան դատապարտել են: Այսպէս շատ և շատ բաներ կան, որ մեր գլխին գալիս են, մեր սրտից արիւն հանում, մեր աչքերից արտասուք քամում, ու մեր մեղքից չէ, մենք ամենեւին մեղաւոր չլինելով ենք էղանք քաշում: Բայց այս ամեն մեր քաշածների մէջ՝ եթէ իրաւամբ ցաւում ենք, բայց մխիթարութիւն էլ ունինք, որ ասում ենք մեր սրտումը թէ՛ Աստուծոյ կամքն այսպէս է եղել, երկնաւոր ծէրն ու Հայրն այսպէս է մեզ կամեցել: Բայց թէ ինչու համար է ողբալէս անօրինել և ոչ ուրիշ կերպ, այդ բանը մենք չենք հասկանում, մեր խելքը չէ հասնում, Աստուծոյ խորհուրդներն մեզ համար անքննելի և անխմանալի են: Ո՞վ է կարող բոլոր աշխարհիս մէջ եղած կապակցութիւններն, օրէնքներն ու նպատակներն քննել, հասկանալ: Ո՞վ կը յանդգնի Աստուծոյ խորհուրդները քննել, իմանալ: Աշխարհիս սկզբից, որ ամենայն ինչ, ցտեղծուելով, գո-

յուժիւն ու կեանք է ստացել, ոչ մի ըսն առանց նպատակի նորա մէջ չէ եղել ու չկայ, ու Աստուծոյ նպատակներն Իւր անչափ ու ամբաւ բարութեանն համաձայն են, որ արեգակի նման պարզ երևումէ այն ամեն բաներից, ինչ որ Ենքը ստեղծել է:

Բայց մեր կեանքի շատ ու շատ չարիքն, որոյ վերայ մենք գանգատուելու սովորութիւն ունինք, մեր գլխին գալիս են Բիւնի Բիւնի և հետեւանք են մեր արած սխալանքի՝ կամ յանցանքի: — Հէնց այս պատճառով էլ սովորաբար շատ աւելի ենք գանգատուում մեր քաջածններից: Մարդուս ընտելութիւնն այնպէս է, որ մենք այն անբաղդութիւններն, որ կրումենք և ինքներս չենք պատճառն, կամ մեր մեղքից չէ, որ մեր գլխին եկել են, աւելի մեծահոգութեամբ ենք տանում, ոյո՛ւ՝ մինչև անգամ ուրախութեամբ ու ազնիւ հպարտութեամբ շատ ու շատ անգամ: — Այն հիւանդութիւններն, որ քաշել են մարդիկ ու իրանք չեն եղել պատճառն, դեռ չէ պատահել, որ նորանց յուսահատութեան տանին, բայց միշտ անտանելի է եղել և է, երբ որ վիրաւորումն մեզ, կպչելով մեր պատուասիրութեանը, ժլատութեանը, հպարտութեանն և ուրիշ մեր մոլութիւններին: Պատճառ որ հաւելնէր հագուելու Բիւնի Բիւնի և, ու ինչ որ հոգին կրումէ, աւելի պաշտէ, քան թէ այն ամեն բանն, որ մեր մարմնոյն կարող է կպչել:

Աշխարհս քո հայելին է: Իսկ ինձ ասա՛ թէ՛ ինչպէս ես գտաւում աշխարհիս, մարդոց ու քո իսկ դրութեանդ վերայ, ու ես քեզ կասեմ, թէ ինչ կրքեր են քո մէջդ ծածկուած, որն յուզվումն:

Իսկ անբաղդ ես, որսկհեռե գանգատումես, բայց քո մէջդ ես կրում այն խայթոցը, որ քո յաջողութիւնդ ձախորդութեան դարձրեց, լաւ դրութիւնիցդ քեզ վատ դրութեան մէջ քցեց: Ենքդ քեզ փորձիր ու ինքդ հարցուր քեզ թէ՛ ինչո՞ւ համար քո սրտումդ գոհ չես քո դրութիւնիցդ, ինչո՞ւ քո հանգամանայդ մէջ բոլորովին բախտաւոր չես. ու դու կը գտնես հոգւոյդ այն հիւանդութիւնն, որ ունիս ու քաշումես: Իսկ կը տեսնես բոլ բոլր, դու կը գտնես այն պատճառը քո հիւանդութեանիցդ՝ ոչ թէ քո շրջակայքումդ՝ կամ քեզ մօտիկ տեղերումն, այլ քո սրտիդ խորքումը: Այնտեղ է վէրքը, բժշկիր: Յիսուսի Քրիստոսի կրօնը առաջարկում է քեզ հոգւոյ դեղ: Աստուած քո բաղդաւորութիւնդ է կամենում, միայն դու մինչև ցայժմ երբէք սրտանց չես կամեցել այդ դեղն իմանալ թէ՛ որ տեղ է, այլ քո ինքնահաճութեամբդ

միայն այնտեղ ես պառելի որտեղ որ երբէք չէ գտնուել:

Ես քեզ թի խօսք թայն կասեմ, ով իմ հոգի, հէնց մի խօսք միայն. բայց այնպիսի մի խօսք է, որոյ մէջ քո փրկութիւնդ կը գտնես: Ընդունիր այս խօսքս ու միտքը հասկացիր: Նորանով քո վերքերդ կը բժշկուին, քո հանգամանքներդ կը լաւանան: Այս խօսքս այն դեղն է, որ քեզ հարկաւոր է՝ և այդ դեղը՝ չափաւոր—լիքն է:

Զափաւոր եղիր քո ամենայն ցանկութեանցդ մէջ. չափաւոր եղիր սիրելուդ և ատելուդ մէջը. չափաւոր եղիր այն բանը վայելելուդ մէջը, որ քեզ ուրախացնում է. չափաւոր եղիր շատ մեծ բանի տեղ դնելումդ, որպէս և պահարակելումդ այն բանն, ինչ որ անցաւոր է, այս օր կայ, վաղը չկայ: Զափ ունեցիր, չափ պահիր քո ամենայն բանիդ մէջն, ու անբախտութիւնն էլ քո դէմդ չափ կը պահի, քեզ համար իւր չափը կունենայ:

Աշխարհիցս սրճափ որ քիչ բան պահանջենք, այնչափ աւելի հարուստ կը լինենք մեր մէջը: Ինչ որ մեր մէջը կայ, ոչ ոք մեր ձեռքից տանել, մեզանից իլել չէ կարող: Ինչո՞ւ համար է մեր աչքը չկշտանալը փողից: Մեր վիճակով զոհ լինելն ամենամեծ հարստութիւնն է: Ինչո՞ւ համար է մեր բուռն ցանկութիւնը գերազանցութեան ու փառքի հասնելու: Առաքելութիւնն է մշտապէս՝ մշտափայլ պատիւն, որուն ոչ ոք վնասել չէ կարող, թող թէ ոչընչացնել: Ինչո՞ւ համար է շատ փափուկ հանգիստ ու փայլթամ կեանքի ետև իյ ընկնելը: Մի՞թէ ուղումես դու գերին լինել քո մարմնոյդ, որ կարելի է, դեռ մի տարի անց չկացած, գերեզմանումը պէտք է փոխ: — Հայրդ, մայրդ, եղբայրդ, քոյրերդ, զաւակներդ, քո սրտիդ սիրելիները մահկանացու են: Միշտ մտքիցդ անցկացուր ու պատրաստ կաց նրանցից բաժանուելու ժամի համար: Կամ նոքա քեզանից առաջ կը մեռնեն, կամ դու նրանց մահը կը տեսնես: Նորանց հոգին կմնայ քեզ համար, ոչ թէ մարմինը: Սորվեցուր քեզ վաղօրօք մտածելու, որ դու մի օր քո սրտիդ ամենասիրելին էլ կը կորցնես. երբ որ այդպիսի մտածմունքովդ շատ առաջուանից քեզ պատրաստած կլինես մի շատ ծանր զրկանք և աննորոգելի կորուստ ունենալու, այն ժամանակ այդ կորուստն, որ ունենաս, էլ քեզ յուսահատութեան չի տանիլ ու ինքդ քեզ չես կորցնիլ: Այն ժամանակ էլ, երբ որ, անպատրաստ չլինելով, այդ մեծ անբաղգնութեանը կը հանդիպես, էլի զուարթ

դէմքով, քրիստոնէական համբերութեան ու հնազանդութեան ժպիտը երեսիդ, աչքդ կը քցես դէպի երկինքն ու կասես. Աստուած չէ՞ մի անմահ հոգիների Հայրն, ու այս բոլոր աշխարհումեր հայրական տունը չէ՞ մի:

Արդէն շատ անգամ իմ սրտիս խորքը շարժող մի սուրբ հիացումն եմ զգացել, երբ որ կարգացել եմ Յիսուսի Քրիստոսի այն խօսքերին, որ Նա ասել է իւր աշակերտացն՝ իւր մահուանից առաջ՝ նրանց հետ մնաք բարեւ անելու ու նրանցից բաժանուելու միջոցին. « Ի՞նչ խաղաղութիւնն է՞ Կալի յէլ, ի՞նչ խաղաղութիւնն է՞ Լուսնո՞ւմ յէլ. այնպէս չէ՞ Կալի յէլ, ինչպէս աշխարհաւ է Կալիս » . ու յետոյ էլ թէ՛ « Աշխարհին մէջը նեղութիւն կանանաւ, Բայց սիրտ առեւ, է՞ յաղթեցի աշխարհին » : — Ի՞նչ գերաշխարհիկ, ի՞նչ աստուածային իմոստութիւն կայ այս խօսքերիս մէջ Նորա՝ որ չարչարանքներով լի մահուան առաջն էր գնում: Նա իր հոգւոյ մէջը յաղթել էր արդէն այն ամենայն զարհուրանքներին, որ անագորոյն կերպով իւր առաջն էին. արդէն նա իբրեւ յաղթական կանգնած էր, մի լինելով իւր Հօր հետ, որ երկնքումն է: Իւր վերայ չի մըտածում՝ Նա, այլ միայն իւր սրտին թանկագին աշակերտներին վերայ, որոնց որ պիտի թողնէր այս աշխարհիս մէջ և ուղումէ դեռ ևս՝ իբրեւ մի ազնուագոյն բան՝ կտակով թողնել նորանց այն խաղաղութիւնն, որն որ ինքն, պայծառացած, կրումէր իւր սրտի մէջն:

Նա գնումն է ինձ խոնարհութեամբ Նորա աշակերտաց կարգն և աղաչումն՝ Նորան ու ասում, աչքս դէպի երկինք քցած. Տէր, ինձ էլ տուր այդ խաղաղութիւնդ: Աշխարհիս մէջն ես էլ դեռ նեղութիւն ունիմ և ուրիշ ոչ մի տեղ օգնութիւն գտնել չեմ կարող, բայց միայն Նորա մօտ և Նորանից, որ յաղթել է աշխարհքին: Նա անորոտունջ քաշեց ու տարաւ իւր քաշելու, ամենածանր չարչարանքներն, որովհետեւ այնպէս էր իւր Հօր կամքը. Նա արհամարհել էր թագաւորական թագն, որ ժողովուրդն իրան առաջարկել էր, որպէս զի փշեայ պսակն ընտրի, ինչու որ մարդկային փրկութեան համար այդպէս անելն էր լաւ. Նա հրաժարուեց իւր կեանքի ամենայն ուրախութիւններից և միայն մտածումէր իւր եղբայրների փրկութեան վերայ: Որպիսի անպատմելի մեծութիւն մտքի և գործի մէջ, և որպիսի երկնային երջանկութիւնով պիտի լցուած լինէր նորա սիրան, երբ որ Նա, մեռ-

նելու ժամանակը, բացակայեց այս յազմական խօսքը՝ «ամենայն ինչ կատարեալ է» :

Պէտք է հետևիմ իմ Փրկչիս գնացած ճանապարհին, նորա պէս պիտի բարեոք պատերազմը պատերազմեմ, քանի որ ողջ եմ, և ամենայն իմ գլխիս եկածների մէջը, աղօթք անելով՝ ասեմ, արա՛ ինձ հետ ինչ որ քո կամքդ է, միայն քո խաղաղութիւնդ տուր ի՛նձ :

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ՀԱՅՍՏԱՆԵԱՅՑՍ ԲԱՌԱՓԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵԼԵՑԻՈՅ ՊԱՏԽՈՒԹԻՒՆ.

(Շարունակ. Արար., 1886 թ. Գ.) :

ԳԼ. Ը.

Ղազար Զահկեցուն յաջորդ ընտրուեց Կ. Պօլսոյ պատրիարք Մինաս Ակնեցի, որ գալով Ս. Էջմիածին՝ 1751 թուի Սեպտեմբերին, Ս. Խաչի տօնին սուրբ օծումն ընդունեց և 1753 թուի Մայիսի 12 ին վախճանուեց ու թաղուեց Ս. Գայիանէի գաւթի ձախ կողմը, հազիւ մի տարի ութ ամիս վարելով հայրապետական իշխանութիւն :

Մինաս Ակնեցու Էջմիածնի կաթողիկոս ընտրուելուց յետոյ Կ. Պօլսոյ պատրիարք կարգուեց Գէորգ վարդապետ Աբանդցի, բայց կարճ ժամանակով, որովհետեւ Յակովբ Նալեան, որ Երուսաղէմումն էր, այնտեղ ուխտի գնացած մեծ ազգեցութեան տէր Ակնեցի Եպսոբ ամիրային հաճոյանալով՝ նորա հետ Կ. Պօլիս վերադարձաւ և նորա հղօր ազգեցութեամբ 1752 թուին ինքն Կ. Պօլսոյ պատրիարք կարգուեց, իսկ Երուսաղէմայ միաբանութիւնից կանխաւ ընտրուած Գրիգոր Շղթայակրի աշակերտ Թէոփորոս կամ Թորոս վարդապետ՝ Երուսաղէմայ :

Մինաս Ակնեցու մահից յետոյ Ս. Էջմիածնի միաբանից ժողովը որոշեց Յակովբ Նալեանին կամ Կեղեցի Սահակ Ահագինն ըստ հաւանութեան ազգի կաթողիկոս ընտրել : Կ. Պօլսում գումարուած ժողովում թէ՛ Նալեան և թէ՛ Սահակ Ահագին հրաժարուեցին ընտրելիութիւնից, ուստի հաճութեամբ ժողովոյն՝ կաթողիկոս ընտրուեց Էջմիածնի բաղմամեայ և իմանկութենէ հեռէ բաղմաշ-